

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴՐԱՄԱԿԱՆ ԾՐՋԱՆԱՌՈՒԹԻՒՆԸ
ԱՔԵՄԵՆԵԱՆ, ՅՈՒՆԱՄԱԿԵԴՈՆԱԿԱՆ ԵՒ
ՀՌՈՄԷԱԿԱՆ ԴԱՐԱԾՐՋԱՆՆԵՐՈՒՄ
(կրկին վերադարձ հայկական դրամների)

Հայաստանը դրամական գանձերի պարունակութեամբ համարուում է ամենահարուստ երկրներից մէկը: Առանց չափազանցութեան կարելի է ասել, որ Հայաստանի ողջ տարածքի վրայ հազիւ թէ գտնուի մի շրջան, ուր յայտնաբերուած չլինեն հին դրամներ կամ դրամական գանձեր: Հայկական լեռնաշխարհն իր աշխարհագրական դիրքով կապող օղակ է եղել Արեւելքի եւ Արեւմուտքի միջեւ, ապրանքափոխանակութեան շնորհիւ Հայաստանը բիւրաւոր թելերով կապուած է եղել արտաքին աշխարհի հետ, տնտեսական ու քաղաքական իրադարձութիւնները Հայաստան են մղել ազգային տարբեր ծագում ունեցող դրամներ, որոնք կարեւոր վկայութիւններ են հաղորդում ոչ միայն հայ ժողովրդի, այլեւ հարեւան ժողովուրդների պատմութեան վերաբերեալ:

Դրամի յայտնուելը եւ դրամական շրջանառութիւնը վկայուած է Հայաստանի պատմութեան հնագոյն շրջանից: Թանկարժէք մետաղների կշռային ձուլուածքները հին աշխարհում, արդէն ն.Ք. Բ. հազարամեակում, առեւտրական գործարքներում դրամական նշանակութիւն ունէին: Բազմատեսակ ապրանքներից մարդը նախապատուութիւնը տուել է մետաղէ ձուլակտորներին: Միայն պետական կնիքով երաշխաւորուած, որոշակի կշռային չափերով թողարկուած մետաղէ դրամը իրաւունք ունէր համարուելու դրամ եւ ընդունելի լինել միջազգային առեւտրական գործարքներում:

Առաջին դրամները ժամանակագրական աննշան տատանումներով հանդէս են եկել ն.Ք. Է. դարում, Փոքր Ասիայի եւ Յունաստանի վաճառաչահ քաղաքներում, այնուհետեւ՝ մօտ երկու հարիւր տարուայ ուշացումով դիտուում են նաեւ Հայկական լեռնաշխարհում¹: Առաջին դրամները ոսկուց, արծաթից կամ միաժամա-

1 ՄՈՒՇԵՂԵԱՆ, Խ., Դրամական շրջանառութիւնը Հայաստանում, (Մ.թ.ա. Vդ. - մ.թ. XIVդ.), ՀՍՍՀ ԳԱ հրտ., Երեւան 1983, 11:

նակ ոսկու եւ արծաթի բնական համաձուլուածքից էին (electrum, էլեկտրում):

Հայաստանի տարածքում յայտնաբերուած օտար դրամները վերաբերում են ն.թ. 2.-6. դարերին: Տարածաշրջան ներթափանցած ու մեզ հասած այդ եզակի նմոշները հետեւեալներն են.

1. Աքեմենեան արծաթէ մէկ դրամ՝ յայտնաբերուած նախկին Երեւանի նահանգում,

2. Միլեթեան դրոշմով ն.թ. 6. դ. արծաթէ երկու ոբոդոս, գտնուած էրեբունի ամրոցի պեղումներում,

3. Աթէնք քաղաքում հատուած արծաթէ մէկ չորեքդրամեան (տետրադրաքմա) ն.թ. 2.-6. դարերին, յայտնաբերուած Սիսիանում (Հայաստան)²:

Վերոյիշեալ դրամներն իրենց պատկերազրութեամբ, դրամակշռային միաւորներով ժամանակի վկաներն են եւ կարեւոր սկզբնաղբիւր Հայաստանի պատմութեան վերաբերեալ: Յայտնաբերուած դրամների խմբերը ընդունուած են եղել փոքրասիական շուկաներում: Հայկական լեռնաշխարհով անցնող առեւտրամայրուղիները, տարածաշրջան էին բերում բիւրաւոր ապրանքներ եւ հայ բնակչութեանը պէտք է ծանօթ լինէին տարբեր ծագում ունեցող մետաղեայ դրամներ:

Յայտնի է, որ քեմենեանները շուրջ 200 տարիների ընթացքում թողարկել են դրամներ, այդ իրաւունքը ոչ միայն արքայի մենաշնորհն էր այլեւ այն նուաճել էին փոխարքաները (սատրապները)՝ ելնելով տնտեսութեան ներքին եւ արտաքին պահանջներից:

Չնայած սահմանուած դրամական միասնական համակարգի, որ կարգաւորում ու նպաստում էր տնտեսութեան առաջընթացին ու աշխուժութեանը, Աքեմենեանների օրօք Փոքր Ասիայի վաճառահաճ քաղաքներում առեւտրական գործարքները կատարւում էին ինչպէս քեմենեան այնպէս էլ միլեթեան, փոկեյեան, հգինեան, յոնիական, եւբէյեան ծագման դրամներով: Ելնելով տնտեսութեան առեւտրական պահանջներից զուգահեռ շարունակում էր իշխող մնալ ապրանքափոխանակութիւնը:

Համաձայն գրաւոր սկզբնաղբիւրների, մօտ երկու դար Հայաստանը եղել է քեմենեան տէրութեան նահանգներից մէկը մտնելով Աքեմենեանների վարչական սատրապութիւնների կազ-

մուծ: Պահպանուել են Հայաստանի աքեմենեան փոխարքաների հազոուագիւտ դրամները, որ չափագիտական առումով աքեմենեան դրամական համակարգի միաւորներ են: Փոխարքաների դրամները շրջանառութեան մէջ էին մտնում հիմնականում փոքրասիական երկրամասերում, որն աղբիւրագիտական կարեւոր նշանակութիւն ունեն հայ-փոքրասիական առնչութիւնների համար:

Փոխարքաներ՝ Տիրիբազոսը եւ Օրոնտոսը թողարկել են իրենց պատկերներով դրամներ: Այդ դրամները, գտնուել են Կիլիկիայում, Սիրիայում ու Յոնիայում³: Դրամները հատուել են պղնձից, արծաթից, ոսկուց: Արծաթի միաւորները կրկնակի դրաքմաներ են, որոնց ծայրագոյն կշիռները տատանւում են 10,65գ-ից 9,80գ միջեւ: Պղնձէ դրամները կազմում են դրաքմաների 1/6-ը 0,85-ից մինչեւ 0,51գ:

Նշանակալից է սատրապ Օրոնտոսի (Երուանդ) դրամը՝ յայտնի են ոսկէ, արծաթէ, պղնձէ միաւորներով: Այս դրամներն իրենց ծագմամբ ու շրջանառութեամբ Հայաստանի դրամային տնտեսութեան հետ չեն առնչուում: Յիշատակող այդ առանձին վկայութիւնները մեզանում հետաքրքիր են. «Դրամի վրայ հիւանալի յստակութեամբ պահպանուած Օրոնտոսի դիմանկարով, որ միակ պաշտօնական վկայութիւն է աքեմենեան տիրապետութեան վերջում Հայաստանի քաղաքական պատմութեան մէջ յիշատակուած, հայերի մէջ Երեւանի անունով յայտնի դարձած սատրապ-փոխարքայի վերաբերեալ»⁴:

Աքեմենեանների կործանումից յետոյ նրանց դրամակաշարին համակարգը Հայաստանում եւ հարեւան երկրներում չվերացաւ, այլ շարունակուեց նաեւ մակեդոնական տիրակալութեան սկզբնական շրջանում: Հետեւաբար Հայաստանում նախահելլենական ժամանակների դրամները լայն տարածում չեն ունեցել:

Հայաստանը, որն իր աշխարհագրական դիրքով սերտ կապուած էր Իրանի, Միջագետքի եւ Փոքր Ասիայի հետ, թեւակոխել էր զարգացման հելլենական փուլը: Յունական քաղաքակրթութեան մուտքը Հայոց երկիր իր ազդեցութիւնը թողեց նաեւ դրամական համակարգի վրայ: Արդէն Դ. դարի վերջերից աստիճանաբար Հայաստան են թափանցում հելլենական դրամներ: Միջագային առեւտրում լայն ճանաչում ստացած հելլենական արծա-

3 Մանրամասն տե՛ս Ա.Աղ., 16-25:

4 Ա.Աղ., 25:

Թեայ դրամը՝ դրաքման, հանդէս էր գալիս ատտիկեան⁵ դրամակը՝ ռային համակարգի, օրինական կշռով՝ 4,36 գրամ, եւ առեւտրագործարքներում ձեռք էր բերել լայն ճանաչում:

Ինչ վերաբերում է Հայաստան ներթափանցած հելլենական ոսկեայ դրամներին (8,60 գրամ, հայերէն աղբիւրներում՝ սատէր), ապա դրանք համեմատաբար աւելի հազուադէպ էին տարածաշրջանում: Հայաստանում տարածուած էին հելլենական դրամների ինչպէս դրսից ներմուծուած, այնպէս էլ տեղական միաւորները, որոնք հայկական շուկայ էին թափանցում ե՛ւ միջազգային առեւտրի, ե՛ւ ռազմական գործողութիւնների հետեւանքով: Առեւտուրը կատարւում էր առաւելապէս արծաթեայ դրամներով՝ դրաքմաներով եւ չորեքդրամեաններով: Ոսկու եւ արծաթի փորաբերութեամբ: Ոսկին ունէր գերազանցապէս հաշուարկային նշանակութիւն. հաշւում էին ոսկով, վճարում՝ արծաթով: Ինչ վերաբերում է անցեալում ընդունուած դրամական համակարգերին, ապա դրանք, եթէ անգամ չէին վերացել, սոսկ տեղական նշանակութիւն էին պահպանում առանձին երկրների ներքին շուկաներում: Հելլենական դրամների տարածումը Հայաստանում (աւելի կեդոնացու աշխարհակալութիւնից մինչեւ Արտաշէսեանների անկումը:

Հելլենական դրամական պատկերազրույթիւնը այլաբանօրէն է ներկայանում՝ դիցաբանական կերպարների եւ խորհրդանշանների միջոցով⁶:

Հելլենական դրամների բազմատեսակութեան մէջ Ադեքսանդր Մակեդոնացու դրամների մուտքով դրամի դիմերեսին, որպէս կանոն դրոշմուէց իշխող միապետի դիմաքանդակ-պատկերը, մի երեւոյթ, որ մինչ այդ արեւմուտքում ընդունուած չէր⁷: Հա-

5 Հին աշխարհում գոյութիւն են ունեցել բազմաթիւ դրամակշռային համակարգեր: Իւրաքանչիւր համակարգի հիմքում ընկած է եղել հիմնական միաւորի կշռային չափը: Աֆեմնեան, միլեքեան, էգրնեան, փոկեան, էին հին աշխարհում:

6 ЗОГРАФ, А., *Античные монеты, «Материалы и исследования по археологии СССР»*, изд. АН СССР, М., 1951.

7 ՄՈՒՇԵՂԵԱՆ, Խ., *Դրամական շրջանառութիւնը Հայաստանում, (Մ.թ.ա. Vդ. - մ.թ. XIVդ.)*, Երեւան 1983, 28:

յաստանում գտնուած հելլենական ամենահին դրամները մակեդոնական տիրակալներ Աղեքսանդր Մակեդոնացու դրաքմաներն են⁸ եւ Փիլիպոս Գ. Արիդայոսի արծաթէ դրամները⁹, որոնցով սկսուել է Հայկական լեռնաշխարհում հելլենական դրամների մուտքը:

Գտածոները ցոյց են տալիս, որ Ն.Ք. Գ. դարի վերջերից շրջանառուել են սելեւկեանների՝ Անտիոքոս Եպիփանէսի, Անտիոքոս Եւպատորի, Դեմետր Սոտերի, Աղեքսանդր Բալասի, Անտիոքոս Եւերգետէսի, Փիլիպոս Փիլադեդիոսի դրամները, որ վկայում են հայ-ասորական (Սիրիական) անմիջական կապերի մասին: Սելեւկեան դրամների հետ մէկտեղ գործածուում էին նաեւ փիլնիկեան դրամներ՝ Թողարկուած Արադ, Սիդոն եւ Տիւրոս քաղաքներում¹⁰: Հայաստան են թափանցում նաեւ պարթեական, կապադովկեան դրաքմաները:

ԾՈՓՔԻ ԴՐԱՄՆԵՐ

Ծոփքով էր անցնում առեւտրի գլխաւոր մայրուղին՝ «Արփայական ցամաքային»: Այնտեղ զարգանում էր քաղաքային կեանքը, ծաղկում էր առեւտուրը, որ թերեւս եղել է բնակչութեան հիմնական զբաղմունքը: Օտարամուտ դրամների հետ միասին աստիճանաբար շրջանառութեան մէջ էին մտնում նաեւ տեղական թողարկման առաջին հայկական դրամները: Ն.Ք. Գ. դարի կէսերից Փոքր Հայքի ու Ծոփքի ապրանքադրամական յարաբերութիւնների զարգացումը այնպիսի աստիճանի էր հասել, որ մանր առեւտուրն իրականացւում էր դրամով: Ներքին առեւտրի կարիքների համար մանր արժէչափի դրամների թողարկումը կարող էր առաջանալ զարգացող առեւտրի խորացման ժամանակ, երբ ընթանում էր դրամի գործառնական նշանակութեան լիակատար ծաւալումը¹¹:

8 MÜLLER, L., *Numismatique d'Alexandre le Grand*, Basel-Stuttgart, Münzen und Medaillen, 1957.

9 ՄՈՒՇԵՂԵԱՆ, Խ., անդ, 29-30:

10 ՄՈՒՇԵՂԵԱՆ, Խ., *Հայոց պատմութեան դրամագիտականը*, Երեւան 1997, 17:

11 ՄՈՒՇԵՂԵԱՆ, Խ., *Դրամական շրջանառութիւնը Հին Հայաստանում*, «Հայկական դրամներ», ՀԺՊ, 1971, հ. 1, 692:

Ծոփքի հայկական առաջին դրամներն ընդունուած է ն.Ք. Գ. դարի երկրորդ կէսով թուագրել: Այդ դրամները թողարկուել են ն.Ք. Գ. դարի երկրորդ կէսով այնուհանդերձ դրամ թողարկելու իրաւունքը գործնականում խիստ սահմանափակ էր, ու դրամների թողարկումները կատարուել է բացառապէս ներքին առեւտրի զարգացման պահանջով¹²: Հելլենական կերտուածքի հայկական առաջին դրամները հայ տիրակալների դիմապատկերներով, ատտիկեան համակարգի պղնձէ դրամներ էին, որոնք պահպանում էին յունական դրամահատութեան սկզբունքները: Հայկական առաջին դրամների թողարկումը վկայում է Ծոփքի քաղաքական անկախութեան մասին:

Ծոփքի թագաւորների ինքնաիշխանութեան ձգտումը վկայում են որոշ դրամների դարձերեսների վրայ եղած պատկերազրութեան մասեր, որոնք կարող են մեկնաբանուել որպէս անկախութիւն, ինքնավարութիւն արտացոլող հէնց այդպիսի ձգտումներ:¹³

Դրամների դիմերեսին կոնաձեւ գլխանոցով ներկայացուած են Արշամ եւ Քսերքսէս արքաների դիմապատկերները, իսկ դարձերեսին՝ պաշտամունքային խորհրդանշաններ՝ արծիւ, արչաւող ձիաւոր, թեւաւոր կայծակ, թեւաւոր ձի, մական, գաւազան (ցուպ), ինչպէս նաեւ հեթանոս աստուածների՝ Աթենասի, Հերակլէսի (Վահագնի), յաղթութեան աստուածուհի Նիկէի դիցական կերպարները: Վերջիններիս շուրջ, բացառապէս յունագիր նշում էին միապետի անունը, տիտղոսաշարքը, տարեթիւը եւ մենագիրը: Դրամների վրայ դիցաբանական պատկերների հետ մէկտեղ միապետի անձնանունը յիշատակումը թերեւս արտացոլում էր թագաւորի պաշտամունքի գաղափարը¹⁴:

12 Նոյն, *Դրամական շրջանառութիւնը Հայաստանում*, ԵՂ. աշխ., 31:

13 Օրինակ՝ Արշամ Ա. թագաւորի (240-228) պղնձէ դրամի դարձերեսի պատկերների տարբերակները: Տե՛ս SEVRUGIAN, E., *Some remarks on the political portraiture of Arsames, King of Sophene*, ANJ 18, 1992, 39-41; NERCESSIAN, Y.T., *Coinage of the Armenian kingdom of Sophene*, Catalogue of Armenian coins, Collected by Y.T. Nercessian, ANS, S.P., N 14, Los Angeles 2008, 1-2; NERCESSIAN, Y.T., *Horse's head design on coins of Sophene*, ANJ, N 10, 2014, 29-31:

14 ՄՈՒՇԵՂԵԱՆ, Խ, *Դրամական շրջանառութիւնը Հին Հայաստանում*, «Հայկական դրամներ», ՀԺՊ, հ. 1, 693:

Դրամի շրջանակն իր կերտուածքով դեռեւս այնքան կանոնաւոր չէ. դրամները ունէին իրենց կերտուածքի որոշակի բնորոշութիւնը եւ տարբերուում էին անցեալի ինչպէս հնամենի, այնպէս էլ դասական շրջանի դրամներէց:

Ծովքի դրամների դիմերեսի տիպային ոճապատկերազրու-
թիւնն արտայայտուած է ոչ միայն տիրակալների դիմագծերում,
այլեւ գլխանոցների իւրօրինակ՝ կոնաձեւ կառուցուածքով: Ի
տարբերութիւն արտաշէսեան դրամների, ներկայանում է ինքնու-
րոյն եւ իւրայատուկ կերտուածքով:

Հայկական դրամների անդրանիկ թողարկումները կատարուել
են Սամոսատ, Արշամաշատ եւ Արկաթիոկերտ քաղաքներում:

Վաղ հայկական առաջին դրամները, ունենալով տեղական
բնորոշ գծեր, որոշակի աղերսներ ունեն Բ.ա. Բ. դարի սելեւկեան,
պարթեւական եւ կապադովկեան դրամական պատկերազրու-
թեան հետ: Աքեմենեան ժամանակներին բնորոշ արեւելեան տիպի դի-
մագծերն ու գլխանոցների իւրօրինակ կառուցուածքով արքայա-
կան խոյրերը յետագայում ստանում են իրենց աւարտուն հայկա-
կան տեսքը¹⁵:

Այս դրամները, որպէս հայկական առաջին դրամներ, ունեն
պատմական եւ մշակութային բացառիկ նշանակութիւն: Ծովքի
հայ թագաւորութեան դրամների սակաւութիւնը միշտ էլ բոլոր
դարաշրջաններում հետազոտողների մէջ առաջ են բերել դժուա-
րութիւններ նիւթի առնչութեամբ եւ այս դրամների շուրջ մինչ
օրս կան տարբեր տեսակէտներ¹⁶: Այնուհանդերձ իւրայատուկ նշա-
նակութեան հայկական առաջին պղնձեայ դրամները վերջին տաս-
նամեակներում համալրուել են նոր նմոյշներով եւ 53-ից հասել
շուրջ 130-ի¹⁷: Յուսանք յետագայ նոր դրամների երեւան գալը կը
ճշգրտի երկրամասի հելլէնական շրջանի պատմութեան, մշակու-
թային եւ դրամաթողարկման բազմատեսակ հարցերի ու խնդիր-

15 ՄՈՒՇԵՂԵԱՆ, Խ., *Դրամական շրջանառութիւնը Հայաստանում (Մ.թ.ա. V դ. – մ.թ. XIV դ.)*, նշ. աշխ., 31:

16 Վերջին տարիներին դրամագիտական աշխարհում երեւան են եկել դրամներ՝ նոր պատկերազրութեամբ (տե՛ս KOVACS, F. L., *Armenian coinage in the classical period*, London 2016, 1-4; Հայաստանի դրամաշրջանա-
ռութեան պատմութիւն, ՀՀ Կեցութեան պաշտօնական բանկ, 2018): Այս նորոյթները,
որքան էլ հետաքրքիր եւ արժեքաւոր են, սակայն լաւագոյն վկայութիւն-
ներ կարող են հանդիսանալ հնագիտական գտածոները:

17 NERCESSIAN, Y. T., նշ. աշխ., 47-54:

ների վերաբերեալ լուծումները ի նպաստ հայ դրամագիտութեան այս իւրայատուկ գանձարանի:

ԱՆՐԱԴԱՐՁ ԱՐՏԱՇԵՍԵԱՆ ԱՐՔԱՅԱՏՈՂՄԻ ԴՐԱՄՆԵՐԻՆ

Մեծ Հայքում Արտաշեսեան արքայատոհմի հաստատմամբ ու հզորացմամբ հայոց թագաւորներն իրենց դիմապատկերներով հատեցին դրամներ: Ի տարբերութիւն Մոփքի դրամների՝ Արտաշեսեան արքայատոհմի դրամները մեզ են հասել աւելի մեծ քանակութեամբ: Դրամները շրջանառութեան մէջ են հասել աւելի մեծ քանածաշրջան թափանցած հելլենական կերտուածքի սելեւկեան, պարթեւական, պոնտական, փիւնիկեան եւ Հռոմի (հանրապետական ու կայսերական) արծաթէ դրամների հետ միասին աւելի քան 100 տարի¹⁸:

Արքայատոհմի դրամները իրենց պատկերազրութեամբ եւ դրամակշռային համակարգով ճշգրտօրէն արտայայտել են ժամանակի ինչպէս քաղաքական, այնպէս էլ մշակութային փոփոխութիւնները: Համաձայն դրամագիտական գրականութեան տուեալների, Արտաշեսեան առաջին գահակալները, թողարկել են պղնձեայ դրամներ, որոնք ունեցել են չափազանց սահմանափակ շրջանառութիւն¹⁹:

Դրամներով է, որ պահպանուել են Արտաշեսեան արքաների պաշտօնական դիմանկարները՝ կերտուած նրանց անհատականութիւններին բնորոշ գծերով²⁰:

Ա.- ՏԻԳՐԱՆ Բ. ՄԵԾԻ ԴՐԱՄՆԵՐԸ

Արտաշեսեան արքայատոհմի դրամները միջազգային ճանաչում են ստացել միայն Տիգրան Մեծի գահակալութեան տարիներին, քանի որ նրա օրօք Հայաստանը դարձաւ Մերձաւոր Արեւելքի աշխարհակալ տէրութիւն: Ոչ մի հայ արքայ այդքան առատօ-

¹⁸ ՄՈՒՇԵՂԵԱՆ, Խ., Հայոց պատմութեան դրամագիտականը, Եջ. աշխ., 18:
¹⁹ LANGLOIS, V., Numismatique générale de l'Arménie, Paris 1859; BABELON, E., Catalogue des Monnaies grèques de la Bibliothèque Nationale, Les rois de Syrie, d'Arménie et de Commagène, Rollin & Feuardent, Paris 1890; ՊՏՈՒԿԵԱՆ, Զ., Արտաշեսեան Հարստութեան դրամները, Վիեննա 1983, 7-11; ՄՈՒՇԵՂԵԱՆ, Խ., Դրամական շրջանառութիւնը Հայաստանում, Եջ. աշխ., 43-44:

²⁰ ՄՈՒՇԵՂԵԱՆ, Խ., Հիմ Հայաստանի դրամային շրջանառութեան պատմութիւնից, ՊԲՀ, 1970, հ. 3, 71-72:

րէն եւ կանոնաւոր դրամներ չի թողարկել, ինչպէս Տիգրան Մեծն իր գահակալութեան տարիներին: Աւելին, նրա դրամները շարունակում էին մնալ շրջանառութեան մէջ յետագայում եւս՝ հանդիսանալով հիմնական վճարամիջոց:

Տիրակալի ժամանակ նրա ենթակայութեան տակ գտնուող երկրներում առատ դրամաթողարկումները պայմանաւորուած էին ոչ միայն երկրի տնտեսական պահանջներով, ներքին ու միջազգային դրամաշրջանառութեամբ, այլեւ երկրի ռազմաքաղաքական իրավիճակով: Տիգրան Մեծի շքեղաշուք դրամները, իրենց պատկերազարկան, հնագրական, ոճակատարողական վարպետութեամբ եւ դրամակշռային համակարգով, Հին աշխարհի լաւագոյն յուշարձաններից են: Դեռեւս 1671 թուականից Տիգրանեան դրամի գծագրութիւնը ներկայացուել է դրամագիտական գրականութեան մէջ²¹:

Դրամի դիմերեսին պատկերուած է Հայոց արքայի փառաւոր կիսանդրին՝ դէմքով աջ եւ որպէս կանոն՝ հայկական խորհրդանիշ դարձած շքեղաշուք թագով, որի նմանը չունէր ժամանակակից եւ ոչ մի վեհապետ, ո՛չ Արեւելքում, եւ ո՛չ էլ Արեւմուտքում²²: Այն յայտնի է հայկական խոյր կամ *Armenian tiara* անուամբ²³: Այն լաւագոյնս ներկայացուած է Տիգրան Մեծի տետրադրաքմաների վրայ: Բազմաթիւ հետազոտողներ են անդրադարձել թագի յօրինուածքին, պատկերազրութեանը եւ խորհրդին²⁴: Հայոց թագը

21 SPANHEIM, E., *Dissertationes de praestantia et usu numismatum antiquorum* (Ed. Ses.), Amsterdam 1671, 455, Londini 1706, 468-470.

22 ՊՏՈՒԿԵԱՆ, Զ., *Արտաշէսեան Հարստութեան դրամները*, Վիեննա 1969: ՄՈՒՇԵՂԵԱՆ, Խ., *Հայաստանի Դրամական Գանձերը*, Ա., Երեւան 1973, 78, (121, 128), ՄՈՒՇԵՂԵԱՆ, Խ., *Դրամական շրջանառութիւնը Հին Հայաստանում*, «Հայկական դրամներ», ՀԺՊ, 694: NERCESSIAN, Y. T., *The evolution of the Armenian tiara*, ANJ, vol.11, 1985, N. 1, 2-12. A classification of the tetradrachms of Tigranes the Great of Armenia 2000, 117-132: Երախտագիտութեամբ պետք է նշել այն ահռելի աշխատանքը, որ տարիների ընթացքում կատարել է Ե. Ներսիսեանը հայ դրամագիտութեան ասպարէզում: Տե՛ս NERCESSIAN, T., *Yeghia T. Nercessian: A man dedicated to Armenian numismatics*, Catalogue of Armenian coins, 2008:

23 NERCESSIAN, Y. T., *Armenian numismatic studies*, ANS, S.P., 9, Los Angeles 2000, 138-148.

24 ՄՈՒՇԵՂԵԱՆ, Խ., *Դրամական շրջանառութիւնը Հին Հայաստանում*: Հայկական դրամներ, ՀԺՊ, 694-695; NERCESSIAN, Y. T., *The evolution of the*

ներկայացնում է մի բարդ համակարգ, որի ձեւաւորումն ունեցել է երկարատեւ պատմութիւն՝ տեղական աւանդոյթի եւ որոշակի նորութիւնների բազմաշերտ համադրութեամբ, եւ որպէս աւարտուն համակարգ, կայացել է Տիգրան Մեծի օրօք²⁵:

Արտաշէսեան դրամների դարձերեսին պատկերւում էին հելլենական ժամանակաշրջանին բնորոշ դիցաբանական կերպարներ, խորհրդանշաններ, կենդանական ու բուսական պատկերներ, երբեմն՝ այլաբանական պատկերներ: Դարձերեսների բազմազանութեան այս մեծ շղթան՝ Տիւքէի (երկրի ճակատագրի աստուածուհի), Վահագնի առատութեան եղջիւրի, ցորենի, արմաւենիի, նոճիի (հասկի), եռոտանիի, փիղի, յաղթանակի աստուածուհի՝ Նիկէի, ձիու, մահակի ինչպէս խիստ հազուադէպ հանդիպող քառաձի մարտկառքով արչաւող արքայի կերպարի միջոցով հաղորդուել է Տիգրան Մեծի դրամաթողարկման բաւականին բարդ համակարգը: Դրամի վրայ առկայ են մենագրեր, թողարկման տարեթուեր եւ դրամահատարանի նշաններ: Այդ բոլորին աւարտուն տեսք է հաղորդում արքայի անունն ու պատուատիտղոսը՝ յունագիր արձանագրութեամբ:

Տիգրան Մեծի դրամների դարձերեսի պատկերների բազմազանութեան մէջ առաւելապէս նշանաւոր էր երկրի եւ պետութեան

Armenian Tiara, A.N.J., Vol. 11, 1985, N 1, 2-12; ՏԵՐ-ՂԵՆՈՆԴԵԱՆ, Հ., Արտաշէսեան արքայատոհմի թագերը եւ անոնց ծագումը, ի «Հանդէս Ամսօրեայ», 1986, 281-295; ՄԱՆԱՍԵՐԵԱՆ, Ռ., Տիգրան Մեծ. Հայաստանի պայքարը Հռոմի եւ Պարթեւաստանի դէմ, Երեւան 1987; Նոյն, Հայաստանը Արտաւազդից մինչեւ Տրդատ Մեծ, 112-116; СТЕПАНИАН, А., К Государственной политике Царя Артавазда II, ИФЖ., 1989 №2, 40-54, TIRATSIAN, G., Armenian portrait art in the coins of Tigranes II and Artavasdes II, Armenian Numismatic Journal, 1993, Vol. 2, 29-39; ՍԱՐԵԱՆ, Լ., Արտաշէս III-ին վերագրուող նոր արծաթէ դրամ, ՊԲՀ, 1998, հ. 3, 157; ԶԱՐԴԱՐԵԱՆ, Մ., Հայոց թագի ձեւաւորման խնդրի շուրջ, Հին Հայաստանի պատմութեան եւ մշակոյթի հարցերը, Գեորգ Տիրացեանի յիշատակին նուիրած գիտաժողովի գեկուցումներ, Երեւան 2001, 57-65; ՎԱՐԴԱՆԵԱՆ, Ռ., Արտաւազդ II-ի դրամները, 57-60; ՅԱԿՈԲԵԱՆ, Հ., Տիգրան Մեծ, 214-224;

25 ԶԱՐԴԱՐԵԱՆ, Մ., Հայոց թագի ձեւաւորման խնդրի շուրջ, նշ. աշխ., 57-65, (տե՛ս նաեւ NERCESSIAN, Y. T., The evolution of the Armenian tiara, ANJ, vol.11, 1985, N 1, 2-12):

հովանաւոր, Անտիոք քաղաքի աստուածուհի՝ Տիւբէի կերպարը, որն առաջին անգամ պատկերուել է իբրեւ քաղաքի պաշտպանութեան եւ գլխաւոր հովանաւորի խորհրդանշան²⁶: Դրամի դարձերեսի համար արձանի ընդօրինակումը հանդիսացել է նախատիպ, դառնալով նաեւ պետական խորհրդանշան, որ յետագայում ամբողջութեամբ կամ մասնակիօրէն ընդօրինակուել է ինքնավարութիւն ձեռք բերած քաղաքների կողմից²⁷:

Տիգրան Մեծի դրամները թողարկուել են Արտաշատում, Անտիոքում, Տիգրանակերտում, Դամասկոսում, Մծբինում եւ արբանեակ դրամահատարաններում: Արքան իր գահակալութեան ժամանակ թողարկել է արծաթէ, պղնձէ, բրոնզէ դրամներ: Տիրակալը գերադասում էր դրամաթողարկումները կատարել առաւելապէս արծաթից կամ պղնձից: Մինչ օրս հելլէնական շրջանի հայ թագաւորների ոսկէ դրամներ չեն յայտնաբերուել: Թանգարաններում ցուցադրուած ոսկէ դրամները դրամագէտների կողմից համարուում են կեղծ, սակայն չի բացառուում դրանց բնօրինակի գոյութիւնը:

Տիգրան Մեծի պղնձէ առատ թողարկումներում կշռային տատանումները շատ մեծ են, յատկապէս Նիկէ եւ Տիւբէ պատկերատեսակներում, եւ առօրեայ կեանքում պղնձէ դրամի արժեքափը կարող էր որոշուել ոչ այնքան նրա չափով ու կշռով, որքան դարձերեսի տիպարով²⁸: Յաղթանակի դիցուհու պատկերով պղնձէ դրամները իրենց ոճակերտուածքով բազմազան են, որ նաեւ վկայում է, թէ թողարկուել են տարբեր դրամահատարաններում իսկ Տիւբէի պատկերով դրամների դրամակշռային տուեալները համեմատաբար աւելի մեծ են²⁹: Արտաշատի դրամահատարանը կիրառել է սելեւկեան եւ պոմպէոսեան տարեգրութեամբ ընդունուած թուագրութիւն: Վերջինիս մեկնակէտը հաշուարկուում էր Ք.ա. 66 թ. Տիգրան Մեծի եւ Պոմպէոսի միջեւ Արտաշատում կնքուած

26 ՄՈՒՇԵՂԵԱՆ, Խ., Հին Հայաստանի դրամային շրջանառութեան պատմութիւնից, ՊԲՀ, 1970, հ. 3, 73:

27 ՄՈՒՇԵՂԵԱՆ, Խ., Դրամական շրջանառութիւնը Հին Հայաստանում, «Հայկական դրամներ», ՀԺՊ, 695:

28 ՎԱՐԴԱՆԵԱՆ, Ռ., Դիտողութիւններ Տիգրան Մեծի բրոնզէ թողարկումների չափագիտութեան եւ ժամանակագրութեան վերաբերեալ, Զեկուցումների հիմնադրոյթներ, Հայոց պատմութեան եւ մշակոյթի հարցեր, գիտական նստաշրջան, Հայաստանի պատմութեան պետական թանգարան, Երեւան 1997, 8-10:

29 Անդ:

դաշնագրի տարուանից³⁰: Ակնյայտ է, որ դրամաթողարկման ընթացքի վրայ անմիջականորեն ազդել է երկրի քաղաքական իրավիճակը:

Տիգրան Մեծն իր դրամների վրայ ներկայանում էր «ΒΑΣΙΛΕΩΣ ΒΑΣΙΛΕΩΝ ΤΙΓΡΑΝΟΥ»՝ «Արքայից արքայ Տիգրան», կամ «ΒΑΣΙΛΕΩΣ ΤΙΓΡΑΝΟΥ»՝ «Արքայ Տիգրան», յունագիր հին արեւելեան պատուատիտղոսով: Խորագրի «Արքայ» ձեւը առաւել բնորոշ է եղել Ասորիքի (Միւրիայի) քաղաքներում թողարկուած դրամների համար: Այդպիսի դրամները թողարկուել են Անտիոքում, Դամասկոսում եւ հաւանաբար՝ Հիւսիսային Միջագետքի այլ քաղաքներում: Իսկ Հայաստանում՝ Արտաշատում եւ Տիգրանակերտում հատուել են «Արքայից արքայ» պատուատիտղոսով դրամները³¹:

Պատուատիտղոս կրող դրամը ոչ միայն առաւել վճարունակ էր, այլեւ քաղաքականութեան մէջ թելադրող կշիռ ունեցող դիւանագիտական լծակ էր, որն օգտագործուում էր նաեւ հակառակորդների միջեւ առկայ հակասութիւններում³²:

Տիգրան Մեծի հազուագիւտ դրամներից են այն մի քանի դրամները որոնց թագի վրայ պատկերուած է Հալլէի գիսաստղի պատկերը³³:

30 ՎԱՐԴԱՆԵԱՆ, Ռ., Արտաշէս II-ի տարեթուակիր պղնձ դրամը՝ Արտաշատում Պոմպէոսեան տոմարի կիրառման եւս մի վկայութիւն, Ի «Հանդէս Ամսօրեայ», 2000, 126:

31 ՄՈՒՇԵՂԵԱՆ, Խ., ՀԺՊ, Երեւան 1971, 695: Տե՛ս նաեւ ՎԱՐԴԱՆԵԱՆ, Ռ., Դիտողութիւններ Տիգրան Մեծի բրոնզէ թողարկումների չափագիտութեան եւ ժամանակագրութեան վերաբերեալ, Գիտական նստաշրջան Հայոց պատմութեան եւ մշակոյթի հարցեր: Նուիրում է հայագիտութեան հովանաւոր, Հայաստանի ազգային հերոս, Ալեք Մանուկեանի յիշատակին: Զեկուցումների հիմնադրոյթներ, Հայաստանի պատմութեան պետական թանգարան, Երեւան 1997, 8-10:

32 ВАРДАНЫН, Р., Борьба за титул «Царя Царей» в контексте восточной политики Рима I века до н. э. (По нумизматическим, эпиграфическим и нарративным источникам), ՊԲՀ, 2011, հ. 1, 236:

33 GURZADYAN, V. G. – VARDANYAN, R., Halley's comet of 87 B.C. on the coins of Armenian king Tigranes? *Astronomy & Geophysics*, Vol. 45, 2004, p. 4, 6 illus.: Համաձայն Ներսիսեանի՝ «Տիգրան Մեծի աստղով դրամներից մեզ յայտնի են տասը տետրադրամներ եւ հինգ հատ դրամներ» (տե՛ս NERCESSIAN, Y. T., *Silver coinage of the Artaxiad dynasty of Armenia* S.P.n.11, 2006, 165):

Ուշագրաւ է, բրոնզէ վերաթողարկումների համար հայոց արքան օգտագործել է Արադոս եւ Անտիոք քաղաքների դրամները³⁴: Դրամագործութեան մէջ այս երեւոյթը բաւական ընդունուած եւ տարածուած էր: Դա բացատրւում էր բանակի համար շտապ դրամ թողարկելու անհրաժեշտութեամբ եւ այն իրականացւում էր նաեւ շրջիկ դրամահատարանի միջոցով³⁵: Մեծն Տիգրանի օրօք դրամների զգալի մասը վերաթողարկուել է, հաւանաբար, 66-61 թուականների ընթացքում, երբ Պոմպէոսին եւ հռոմէական բանակին մեծ ռազմատուգանք վճարելուց յետոյ առաջացել էր արծաթի եւ պղնձի մեծ կարիք, որ բաւարարելու համար անհրաժեշտ էր օգտագործել արքայի գանձատներում կուտակուած բրոնզէ դրամները:

Այնուհետեւ, ն.թ. 61 թուականից սկսած մինչեւ իր գահակալման աւարտը, Տիգրան Մեծը թողարկել է բարձրորակ արծաթէ դրաքմաներ, տետրադրաքմաներ ու նաեւ բրոնզէ դրամներ³⁶: Կուտակային այս բոլոր գանձերը դարձել են հռոմէացիների թիրախը, եւ «հռոմէական խաղաղութեան» կարեւորագոյն բաղադրիչներից մէկը: Սա հռոմէացիների կողմից իրենց հակառակորդների՝ այդ թւում Մեծ Հայքի, նկատմամբ վարուող մօտեցում էր, որ յանգեցրեց Արտաշեսեանների իշխանութեան տկարացմանը ու անկմանը: Այն սկսուել էր դեռեւս Տիգրան Մեծի գահակալման վերջին շրջանում, իսկ Արտաւազդ Բ-ի իշխանութեան ժամանակ Մեծ Հայքում շրջանառուող դրամական ծաւալների շէշտակի անկումը, յանգեցնելու էր շուկայական գործարքների ու յարաբերութիւնների տկարացմանը: Արդիւնքում, դրամի ներգործութեան թուլացմանը³⁷:

34 NERCESSIAN, Y. T., SARYAN L., *Overstruck and countermarked coins of the Artaxiad Dynasty of Armenia*, ANJ 22, 23-62, USA 1996; ՎԱՐԴԱՆԵԱՆ, Ռ., *Արտաւազդ Բ-ի դրամները*, 100: Արքան օգտագործել է Արադոս եւ Անտիոք քաղաքների դրամները՝ բրոնզէ վերաթողարկումների համար: Պոմպէոսին եւ հռոմէական բանակին ռազմատուգանք վճարելուց յետոյ սպառուել էին արքայի կուտակումները, ուստի նոր դրամաթողարկումների համար օգտագործում է նրանց դրամները:

35 FOSS, C., *The coinage of Tigranes the Great: Problems, Suggestions and a New Find*, Numismatic Chronicle, Vol. 146, 1986, 19-66, pl 5-7.

36 ՎԱՐԴԱՆԵԱՆ, Ռ., *Արտաւազդ II-ի դրամները*, նշ. աշխ., 100:

37 ՍՏԵՓԱՆԵԱՆ, Ա., *Պատմութեան կերպարանափոխութիւնները Մեծ Հայքում, գիրք Ա., Արտաշեսեան դարաշրջան*, Երեւան 2012, 155:

Տիգրան Մեծի թողարկած արծաթէ եւ պղնձէ դրամներից յայտնաբերուել են Արարատեան դաշտի, Շիրակի, Գեղարքունիքի, Սիւնիքի, Արցախի, Գուգարքի շրջանում, Կուր գետի միջին հոսանքից մինչեւ Սեւ ծովի մերձաւոր վայրերը, ինչպէս նաեւ Միջագետքի ու Փոքր Ասիայի երկրներում³⁸։ Ներկայիս հարաւային Թուրքիայում եւ Հիւսիսային Սիրիայում յայտնաբերուած Տիգրան Մեծի դրամները հասնում են հարիւրներին³⁹։

Աշխարհահռչակ մի շարք թանգարաններում պահւում են հայոց արքայ Տիգրան Մեծի պղնձէ եւ արծաթէ դրամները, սակայն ամենամեծ հաւաքածուն գտնւում է Երեւանում՝ Հայաստանի պատմութեան թանգարանում⁴⁰։

Համեմատաբար քիչ են պահպանուել Տիգրան Մեծի յաջորդների դրամները, որոնք չեն ունեցել միջազգային շրջանառութիւն։

Բ.- ԱՐՏԱԻԱԶԴԻ Բ.Ի ԴՐԱՄՆԵՐԸ

Արտաւազդ Բ. արքայի դրամաթողարկումներից շատ քիչ օրինակներ են մեզ հասել։ Դրամների թողարկումը բացառապէս կատարւում էր Հայաստանում՝ Արտաշատի դրամահատարանում։ Հետեւելով անցեալում ընդունուած կանոներին՝ Արտաւազդ Բ.ը իր գահակալման տարիներին թողարկում էր ատտիկեան համակարգի արծաթէ դրաքմաներ, տետրադրաքմաներ ու պղնձէ դրամներ, ըստ համապատասխան գահակալման տարիների⁴¹։

Ժամանակին շրջանառութեան մէջ եղած Արտաւազդ Բ.ի արծաթէ դրամները իրենց յօրինուածքով, ոճապատկերազրական կատարողականութեամբ հելլէնական հայ արուեստի լաւագոյն յուշարձաններից են եւ չեն գիջում Տիգրան Մեծի դրամներին։ Իրենց

38 ՄՈՒՇԵՂԵԱՆ, Խ., Դրամական շրջանառութիւնը Հին Հայաստանում, «Հայկական դրամներ», ՀԺՊ, նշ. աշխ., 34։

39 ՎԱՐԴԱՆԵԱՆ, Ռ., Արտաշէս II-ի տարեթուակիր պղնձէ դրամը, նշ. աշխ., 120-133։

40 Ներկայումս Տիգրան Մեծի դրամների շուրջ ընթանում է նոր դասաւորում (տե՛ս KOVACS, F., *Armenian coinage in the classical period*, 2016, #21-25, 28), որտեղ հեղինակը այդ դրամների մի մասը վերագրել է կրտսեր որդուն, եւ Տիգրան III թողարկումներին։ Յուսամբ, նոր հնագիտական գտածոները կը վերահաստատեն վերոյիշեալ վարկածները։

41 ՄՈՒՇԵՂԵԱՆ, Խ., Դրամական շրջանառութիւնը Հին Հայաստանում, «Հայկական դրամներ», ՀԺՊ, նշ. աշխ., 696; NERCESSIAN, Y. T., *Silver coinage of the Artaxiad dynasty of Armenia*, S. P. N 11, Los Angeles 2006, 166-167; ՎԱՐԴԱՆԵԱՆ, Ռ., Արտաւազդ II-ի դրամները, Երեւան 2004, 25։

վրայ կրում են յունագիր արձանագրութիւններ: Յայտնի են արքայի հետեւեալ պատուատիտղոսները. «ΒΑΣΙΛΕΩΣ ΒΑΣΙΛΕΩΝ ΑΡΤΑΥΑΖΔΟΥ»՝ «Արքայից Արքայ Արտաւազդ», «ΒΑΣΙΛΕΩΣ ΑΡΤΑΥΑ[ΖΔΟΥ]»՝ «Արքայ Արտաւազդ», ինչպէս նաեւ՝ «ΒΑΣΙΛΕΩΣ ΒΑΣΙΛΕΩΝ ΑΡΤΑΥΑΣΔΕΩ ΘΕΙΟΥ»՝ «Արքայից Արքայ՝ Աստուածային Արտաւազդ»⁴²:

Համաձայն վերջին ուսումնասիրութիւնների Արտաւազդ Բ.ի դրամաթողարկման մէջ առանձնացնում են երեք փուլ: Արքան սկզբից թողարկել է պղնձէ մանր դրամներ, այնուհետեւ՝ դրաքմաներ եւ, ըստ երեւոյթին միաժամանակ՝ նաեւ բրոնզէ դրամներ, իսկ վերջում միայն՝ տետրադրաքմաներ⁴³: Հետաքրքիր դրամաթողարկումներից կարելի է առանձնացնել Արտաւազդ Բ. տետրադրաքման, որ բացառիկ տեղ ունի Արտաշէսեան դրամների շարքում: Այն հետաքրքիր է ինչպէս դիմերեսի, այնպէս էլ դարձերեսի պատկերատիպով ե՛ւ գրութեան ձեւով⁴⁴ ե՛ւ թմբանագրով⁴⁵: Արտաւազդ Բ. տետրադրաքման, պահպանելով կանոնիկ ձեւերը (արքայի դէմքը դէպի աջ եւ հայկական խոյրը գլխին, միայն աւելացած ականջօղը), նաեւ ներմուծեց դարձերեսի նոր պատկերատիպ՝ քառաձի մարտակառքի (լատիներէն՝ քռադրիգա) պատկերը: Մարտակառքը վարող կերպարը ենթադրւում է թէ հէնց ինք՝ արքան է: Այս դրամն առանձնայատուկ է նաեւ վրայի ΘΕΙΟΥ («Աստուածային») մակդիրով, (ածականի սեռական հոլովով), ինչպիսին մինչ այս չորեքդրամեանը երբեք չէ արձանագրուած Հայաստանի դրամների վրայ⁴⁶: Քառաձի մարտակառքի պատկերով դրամների թողարկումները հելլենական արեւելքում հագուադէպ երեւոյթ էին: Դեռեւս Գ.-Ա. դարերում Հռոմէական հանրապետութիւնում նմանատիպ պատկերագրութեամբ դրամներ հատուել են Սիկիլիայում⁴⁷:

42 ՄՈՒՇԵՂԵԱՆ, Խ., *Արտաւազդ II-ի Չորեքդրամեանը*, ՊԲՀ, 1964, հ. 2, 322, MUSCHEGIAN, Ch., *Eine Tetradrachm Artavazdes II*, *Bibliotheca Classica Orientalis*, 11 Jahrgang, Heft 4, Berlin 1966, 208-209; ՎԱՐԴԱՆԵԱՆ, Ռ., *Արտաւազդ II-ի դրամները*, նշ. աշխ., 26-44:

43 Անդ, 96:

44 ՄՈՒՇԵՂԵԱՆ, Խ., *Արտաւազդ II-ի չորեքդրամեանը*, նշ. աշխ., 321-323:

45 Անդ, 318:

46 ՄՈՒՇԵՂԵԱՆ, Խ., *Հայաստանի դրամական գանձեր*, Ա., նշ. աշխ., 31, նաեւ ՎԱՐԴԱՆԵԱՆ, Ռ., *Արտաւազդ II-ի Դրամները*, նշ. աշխ., 74-81:

47 ՄՈՒՇԵՂԵԱՆ, Խ., անդ: Նոյն, *Դրամական Շրջանառութիւնը Հայաստանում*, նշ. աշխ., 55, նաեւ ՎԱՐԴԱՆԵԱՆ Ռ., անդ, 74-81:

Արքայի բրոնզե դրամների վրայ առկայ է երկու պատկերատեսակ՝ յաղթութեան դիցուհի Նիկէի թեւաւոր պատկերը եւ նոճի⁴⁸։ Դրամների վրայ թողարկման տարեթիւ չկայ, ուստի կարելի է ենթադրել, որ թողարկումները կատարուել են համաժամանակեայ։ Այդ դրամները կարող են երկու տարբեր արժեչափի թողարկումներ լինել, որոնք տարբերակոււմ էին դարձերեսի պատկերատիպով⁴⁹։ Միեւնոյն ժամանակ մեզ են հասել Արտաւազդ Բ.ի վերաթողարկումները։ Այդ թողարկումների 60 տոկոսը վերահատուած են։ Եթէ Տիգրան Մեծն իր գանձարաններում պահուող պղնձե դրամների վերաթողարկումների համար օգտագործել է փիւնիկեան ու ասորական ինը քաղաքների դրամներ, ինչպէս նաեւ սելեւկեան չորս արքաների, ապա Արտաւազդ Բ.ի վերաթողարկումներում գլխաւորապէս առկայ են երկու քաղաքների՝ Արադոսի եւ Անտիոքի դրամները⁵⁰։ Ենթադրոււմ է, որ Արտաւազդ Բ.ը իր գանձարանում պահուող փիւնիկեան եւ ասորական դրամների մնացած գանգուածը օգտագործել է իր գահակալութեան աւելի ուշ շրջանում կատարած վերաթողարկումների համար⁵¹։ Արտաւազդ Բ.ին վերագրուող շուրջ 100 դրամներից միայն չորսի յայտնաբերման մասին ունենք ստույգ տուեալներ։ Մնացած դրամների յայտնաբերման վայրերի մասին որեւէ վստահելի տեղեկութիւն չկայ⁵²։ Յայտնի է, որ Արտաւազդ Բ.ի իշխանութեան վերջին տարիները Հայաստանի համար եղել են միջազգային լարուած ու բարդ իրադարձութիւններով տարիներ։ Գտնուելով երկու հզօր միջեւ, Հայաստանը մաքառոււմ էր իր գոյութեան համար, ինչպէս ռազմական այնպէս էլ դիւանագիտական հնարաւորութիւններով։ Արտաւազդի Բ.ի անկումից յետոյ որոշ ժամանակ դադարեցրեցին հայկական դրամների թողարկումը։ Սակայն շուկայում դեռեւս չարունակոււմ էին շրջանառութեան մէջ մնալ հնուց մնացած սելեւկեան, նաեւ՝ Տիգրան Մեծի արծաթէ դրամները օրինակները։

48 Ա.Ա.Պ., 83-85: Հետազոտողներն դարձերեսի պատկերին տալիս են տարբեր անուանումներ՝ ճոնի, հասկ, ցիգակի ծայր։

49 Ա.Ա.Պ., 105-106:

50 Արտաշէսեան դրամների վերաթողարկումների մասին հանդէս են եկել Պտուկեան Զ., Մուշեղեան Խ., Ֆոս, Ներսիսեան Ե., Սարեան Լ., Վարդանեան Ռ. եւ այլք։

51 Ա.Ա.Պ., 100:

52 Ա.Ա.Պ., 108 -109:

Գ.- ԱՐՏԱՇԵՍ Բ.Ի ԴՐԱՄՆԵՐԸ

Քաղաքական բարդ իրավիճակում գահ բարձրացած Արտաշէս Բ.ը շարունակում էր պայքարել Հայոց թագի համար՝ միաժամանակ թողարկելով դրամներ եւ պահպանելով Արտաշէսեան դրամահատութեան աւանդոյթները: Դեռեւս անցեալ դարի վերջերին Արտաշատի հնագիտական պեղումներից յայտնաբերուել են երկու պղնձէ դրամներ, որոնք վերագրուում են Արտաշէս Բ.ին⁵³: Նորայայտ գտածոները իրենց պատկերազարկան մանրամասներով եւ կշռային ցածր համակարգով տարբերուում էին Արտաշէս Բ.ի մինչ այդ յայտնի դրամներից⁵⁴: Պարզուեց, որ արքան, Ն.Ք. 31/30 թուականներին՝ Հայաստանի գահը վերանուաճելուց անմիջապէս յետոյ,⁵⁵ հատել է պղնձէ դրամներ՝ յունարէն գրութեամբ, նուազեցուած կշռով եւ անուանական բարձրացուած արժէքով XB՝ երկու քաղկոս մակագրութեամբ⁵⁶: Արտաշէս Բ.ի դրամի դարձերեսին նշուած ՀԱ տառերը ներկայացնում են թողարկման տարեթիւը՝ 36, որ վկայում է Արտաշատում պոմպէոսեան տոմարի կիրառման մասին, որի հաշուարկային սկզբնակէտը, ինչպէս նշուեց, Ն.Ք. 66 թուականն է⁵⁷: Համաձայն այդ դրամի՝ կարելի է ենթադրել, որ մեծ կարեւորութիւն էր տրուում՝ Պոմպէոսի հետ Տիգրան Մեծի կնքած հայ-հռոմէական դաշինքին: Պոմպէոսեան տոմարի կիրառումն առաջին հերթին նախաձեռնուել էր քաղաքական նկատառումներով: Վկայակոչելով դաշինքը հռչակում էր հայերի օրինական իշխանութեան իրաւական ոյժը, երբ հռոմէացիները փորձեր էին անում ետ կանգնել պայմանագրի պայմաններից⁵⁸:

53 ԶԱՐԴԱՐԵԱՆ, Մ., Եզակի դրամներ Արտաշատի պեղումներից, Արտաշէս Բ., Դրամաշրջանառութիւնը Հայաստանում. Հանրապետական գիտական նստաշրջան, 1998, 5-7: Արտաշէս Բ.ի անդրանիկ դրամները եւ պատմա-դրամագիտական դրուագներ վերջին Արտաշէսեանների ժամանակաշրջանից, Դրամագիտական հետազոտութիւններ, Երևան 2000, 4-25:

54 ՎԱՐԴԱՆԵԱՆ, Ռ., Արտաշէս Բ.ի տարեթուակիր պղնձէ դրամը, Արտաշատում Պոմպէոսեան տոմարի կիրառման եւս մի վկայութիւն, Ի «Հանդէս Ամսօրեայ», 2000, 126:

55 Անդ., 126:

56 Անդ.: Ի դէպ՝ նման երեւոյթ ընդունուած է սելեւկեան ու պարթեական դրամների թողարկումներում:

57 Դրամի աջ դաշտում եղած տառերը բոլոր հետազոտողների կողմից ընդունում են թուեր տարբեր մեկնաբանութիւններով:

58 ՎԱՐԴԱՆԵԱՆ, Ռ., Արտաշէս Բ.ի տարեթուակիր պղնձէ դրամը՝ Արտաշատում Պոմպէոսեան տոմարի կիրառման եւս մի վկայութիւն, 126: Տե՛ս նաեւ NERCESSIAN, Y. T., *Asilvercoin of Artaxias II (30-20 B.C.)*, 133-137, pl. 33:

Վերջին տարիներին դրամների վաճառքի շուկայում գլո-
նուել են պղնձե դրամների մի խումբ, արամերէն գրութիւններով՝
ի տարբերութիւն արտաշէսեանների նախորդ ժամանակաշրջանում
հատուած բոլոր դրամների, որոնք յունարէն են: Ուսումնասիրող-
ների կողմից հրատարակուեց դրամների մի խումբ, որ տարբեր-
ւում է նաեւ արտաշէսեան դրամաթողարկումների պատկերազրու-
թիւնից, վերջինիս ոչ բնորոշ տարրերով⁵⁹: Հաւանաբար, պղնձե
այդ դրամները ի յայտ են եկել պատմական ինչ-որ արտակարգ
հանգամանքներում ու արտաշէսեան դրամաթողարկման մէջ նո-
րոյթ են ու կարող են վերապահումներով վերագրուել Արտաշէս
Բ-ի պղնձե դրամների շարքին⁶⁰:

Դ.- ՏԻԳՐԱՆ Դ. ԵՒ ԷՐԱՏՈՅ ԹԱԳՈՒՀՈՒ ԴՐԱՄՆԵՐԸ

Հայկական դրամների շարքում բացառիկ տեղ է գրաւում
Տիգրան Դ.-ի եւ Էրատոյ թագուհու (ն.թ. 2-1 թուական) համա-
տեղ⁶¹ պատկերով հազուադիւտ պղնձե դրամների թողարկումը
«ΒΑΣΙΛΕΥΣ ΒΑΣΙΛΕΩΝ ΤΙΓΡΑΝΗΣ»՝ «Արքայից արքայի Տիգրան» ձե-
ւով, իսկ Էրատոյ թագուհու դիմանկարի շուրջ՝ «ΕΡΑΤΩ ΒΑΣΙΛΕΩΣ
ΤΙΓΡΑΝΟΥ ΑΔΕΛΦΗ»՝ «Էրատոյ՝ արքայի Տիգրանի քույրը» գրու-
թեամբ:

Հելլէնական արեւելքի համար հազուադիւտ այս դրամները
ներկայանում են արեւմուտքի հռոմէական միապետերին բնորոշ
պատկերազրութեամբ: Հայոց թագուհին ներկայանում է առանց
թագի՝ հռոմէական տիկնանց վարսայարդարման ոճին բնորոշ տես-
քով: Թագուհու պատկերումը նորերեւոյթ էր հայկական դրամների
վրայ: Բացառիկ այս դրամները Հայաստանի քաղաքական պատ-
մութեան հազուադիւտ նմոշներ են⁶²:

59 ՎԱՐԴԱՆԵԱՆ, Ռ. - ՎԱՐԴԱՆԵԱՆ, Կ., Արտաշէսեան պղնձե դրամների
նորայայտ խմբեր, ի «Հանդէս Ամսօրեայ», 2005, թիւ 1-12, 76-113:

60 Անդ, 106: Ձմայած կայ կարծիք, որ այդ դրամները վերագրուում են Ար-
տաշէս Ա-ին (տե՛ս KOVACS, F., 2016, 9-10):

61 ՊՏՈՒԿԵԱՆ, Զ., Արտաշէսեան հարստութեան դրամներ, 36: ՄՈՒՇԵ-
ՂԵԱՆ, Խ., Դրամական շրջանառութեան պատմութիւն, 62: աշխ., 64;
NERCESSIAN, Y. T., Catalogue of Armenian coins, 54; Հայաստանի դրամա-
շրջանառութեան պատմութիւն, ՀՀ Կենտրոնական բանկ, 62: աշխ., 51:

62 ՊՏՈՒԿԵԱՆ, Զ., Արտաշէսեան հարստութեան դրամները, 62: աշխ., 95,
ՄՈՒՇԵՂԵԱՆ, Խ., Դրամական շրջանառութիւնը Հայաստանում, 62: աշխ.,

ԴՐԱՄԱԿԱՆ ՇՐՋԱՆԱՌՈՒԹԻՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ Բ.-Գ.ԴԱՐԵՐՈՒՄ

Հռոմի նուաճողական քաղաքականութիւնը Օգոստոս Օկտավիանոսի իշխանութեան տարիներին հիմնովին վերացրեց Հայաստանում դրամների ազգային պատկերատիպը: Միջազգային շուկայում լայն տարածում գտած հռոմէական արծաթէ դրամները բացարձակ առաւելութիւն էին ձեռք բերել Հայաստանի դրամական տնտեսութեան մէջ: Նախկինում ընդունուած ատտիկեան դրամակշռային համակարգը ետ էր մղուել, թէեւ արեւելքում այն յարատեւեց մինչեւ Գ. դարի սկիզբը⁶³:

Օգոստոս Օկտավիանոս կայսեր իշխանութեան օրօք Հայաստանը քաղաքական ծանր ու խառնաշփոթ իրավիճակում էր: Քաղաքական եւ մշակութային յարաբերութիւնների ճգնաժամային վիճակն իր դրոշմն է դրել նաեւ դրամների թողարկման ընթացքի վրայ, որն արտայայտուում էր դրամների տեղական ոճապատկերազրական կերտուածքի փոփոխութեամբ: Հայաստանում հիմնովին վերանում են դրամների ազգային պատկերատեսակները:

Հայոց զահին Հռոմի դրածոյ Արտաւազդ Դ. թագաւորի արծաթեայ դրամները իրենց չափազիտական տուեալներով եւ պատկերատիպով միանգամայն հռոմէական են: Դրամի դիմերեսին պատկերուած է Հռոմի կայսեր Օգոստոս Օկտավիանոսի դիմապատկերը դափնեպսակով զարդարուած, շուրջը «Աստծոյ կայսեր քարեքարի» գրութեամբ: Դարձերեսին Արտաւազդի դիմապատկերը առանց Արտաշէսեան թագի, միայն վարսակալ ժապաւէնով պատկերի շուրջը «Արքայ մեծ Արտաւազդի»: Օկտավիանոս-Արտաւազդի դրամները հռոմէահայկական են, ուր չկայ աւանդական թագը, արքան ներկայանում է միայն վարսակալ ժապաւէնով իսկ դրամի գրութիւնները շրջանաձեւ են⁶⁴:

64-65: Դրամը յայտնի է տարբեր հեղինակների հրատարակութիւններով: Չորս նոր դրամների վերագրումը Հայոց թագուհուն, որոնք իրենց պատկերատեսակներով հազուագիւտ են: Տե՛ս KOVACS, F., 2016, plate 14, #179, #180, #187, #188, նաեւ՝ ARAKELIAN, R. – YEVADIAN, M. K., *Erato, reine d'Arménie, étude historique et numismatique, Journal of Ancient Civilizations*, vol.36/1, Printed in Changchun, P.R.China, 67- 115:

63 ՄՈՒՇԵՂԵԱՆ, Խ., *Հին եւ միջնադարեան Հայաստանում տարածուած դրամների հիմնական խմբերը*, ՊԲՀ, 1976, հ. 1, 114:

64 ՄՈՒՇԵՂԵԱՆ, Խ., *Դրամական շրջանառութիւնը Հայաստանում*, ԵՂ. աշխ. 65:

Արեւմտեւորի ու արեւելքի քաղաքական եւ տնտեսական յարաբերութիւնները պահանջում էին դրամների զանգուածային թողարկում: Արտաշէսեանների անկման տարիներին Հայաստանի շուկաներ էին թափանցում կայսերական դրամների նոր օրինակներ: Հռոմէական դրամային համակարգը լայն ճանաչում էր գտել միջազգային առեւտրում: Նախկինում ընդունուած ատտիկեան համակարգը հետ էր մղուել: Հռոմէական կայսրութիւնը թողարկում էր ոսկէ, արծաթէ, պղնձէ եւ բրոնզէ դրամներ⁶⁵, սակայն միջազգային առեւտրի մէջ առաջուայ նման դրամական միաւորը մնում էր արծաթէ դրամը՝ դենարը⁶⁶:

Դրամագիւտերը ցոյց են տալիս, որ հռոմէական աուրէուսները տարածում չունէին Հայաստանում, մինչդեռ տարածուած էին արծաթէ դրամները: Օգոստոս Օկտաւիանոսի եւ նրա երկու որդեգիրների պատկերներով բարձրորակ արծաթէ դրամները չրջանառութեան մէջ էին ինչպէս Հայաստանում, այնպէս էլ նրա սահմանակից երկրներում: Արծաթի բարձր պարունակութեամբ այդ դրամները միջազգային շուկայում համընդհանուր վստահութիւն էին ձեռք բերել: Հռոմի տիրապետութեան տակ գտնուող եւրոպական երկրներում, նաեւ արեւելքում ի յայտ եկան դրանց ընդօրինակութեամբ տեղական կերտուածքի արծաթէ դրամներ: Այդ դրամների տարածուածութիւնը հիմք է տալիս ենթադրելու, որ թողարկող երկրներից մէկը արեւելքում, հաւանաբար եղել է Հայաստանը, որի դրամահատարաններում, մինչեւ հռոմէական նուաճումը, դրուագում էին հայ թագաւորների դրամները⁶⁷: Իրենց պատկերատիպի մանրամասներով Հայաստանում գտնուած դրամները նման են Գալլիական դրամահատարանում թողարկուած դենարներին, որոնք վերագրւում են Ն.Ք. 2 - 11 յ.Ք. թուականներին⁶⁸:

65 Հռոմէական ոսկէ դրամը՝ աուրէուս (Aureus), թողարկւում էր 8,19 օրինական կշռով: Դրամի առատ թողարկումը կատարւում էր կայսրութեան ժամանակներում: Մէկ աուրէուսը հաւասարագոր էր 25 դենարի: Այս դրամները մեծ շրջանառութիւն են ունեցել կայսրութեան տարածքում:

66 Հռոմի արծաթէ դրամը կոչւում է դենար, որ համարւում էր հռոմէական դրամական համակարգի հիմնական միաւորը. դենարիուս (Denarius), այսինքն «տասանոց»՝ սերուած լատիներէն *deni* = «տասնեակ» բառից: Այն հատուած էր բարձր մաքրութեան արծաթից եւ ունէր 4,55գ. օրինական կշիռ: Ոսկու եւ արծաթի յարաբերութիւնը հաւասար էր 1:12-ի, սակայն այն կայուն չէր:

67 ՄՈՒՇԵՂԵԱՆ, Խ., Հայոց պատմութեան դրամագիտականը, Եջ. աշխ., 24:

68 ՄՈՒՇԵՂԵԱՆ, Խ., Հին Հայաստանի դրամային շրջանառութեան պատմութիւնից, ՊԲՀ, 1970, հ. 3, 82:

Այդ դրամները յայտնաբերուել են Էրեբունու, Գառնիի, ամբողջներում, Արտաշատի եւ Դուրինի աւերակներում, Արթիկում, Իջեւանում, Էջմիածնի շրջակայքում եւ այլուր:

Հռոմի կայսերական դրամները, արագօրէն թափանցելով առեւտրի հայկական շուկանները, արդէն Արշակունեաց թագաւորութեան հաստատման տարիներից տիրապետող էին դարձել, ընդհուպ մինչեւ Գ. դարի առաջին քառորդը⁶⁹: Ուշագրութեան են արժանի Արտաշատ քաղաքի անունից թողարկուած հափազանց հազուադէպ պղնձէ դրամները, որոնք երկար ժամանակ համարւում էին Արտաշատի դրամահատարանի գործունէութեան վերջին վկայութիւնը: Այստեղ են թողարկուել նաեւ Տիգրանի յաջորդների դրամները, եւ փաստօրէն այն եղել է համապետական անդրանիկ եւ միեւնոյն ժամանակ ամենաերկարակեաց դրամահատարանը⁷⁰: Հայկական ոչ մի քաղաք մինչ այդ իր անուանումը դրամի վրայ լրիւ գրութեամբ⁷¹ ΑΡΤΑΣΙΣΑΤΩΝ ΜΗΤΡΟΠΟΛΕΩΝ չէր նշել: Նմանատիպ դրամների երեւան գալը ուշագրաւ է ոչ միայն ներքին շուկայի զարգացման, այլեւ քաղաքական պատմութեան տեսանկիւնից⁷²: Վերջերս Արտաշատի քաղաքային դրամների շարքին վերագրուեց եւս երկու պղնձէ դրամ⁷³, որոնք նախկինում վերագրում էին Թրակիայի Այգոսպոտամի (Aegospotami) քաղաքին: Այդ վարկածը հաստատուեց Արտաշատում գտած երկու պղնձէ դրամների նմոյշներով⁷⁴: Նորայայտ դրամները, որ հատել են Արտազերսում յ.Ք. Ա. դարի առաջին չորս տարիների ընթացքում, արտացոլում են խռովութիւնների մի ժամանակաշրջան, որ առաջացել էր Հայաստանում Օգոստոսի վարած քաղաքականութեան հետեւանքով⁷⁵:

69 ՄՈՒՇԵՂԵԱՆ, Խ., Դրամական շրջանառութիւնը Հայաստանում, 75:

70 ԶԱՐԴԱՐԵԱՆ, Մ., Եզակի դրամներ Արտաշատի պեղումներից, Արտաշէս Բ., Դրամաշրջանառութիւնը Հայաստանում, ՀՀ ԳԱԱ հնագիտութեան եւ ազգագրութեան ինստ., ՀՀ կենտրոնական քանկ, 1998, 5-6:

71 ՄՈՒՇԵՂԵԱՆ, Խ., Հայոց պատմութեան դրամագիտականը, 26:

72 ՄՈՒՇԵՂԵԱՆ, Խ., Դրամական շրջանառութիւնը Հայաստանում: Սկզբից մինչեւ Ժ. դար Զ.Ք.ի, Ազգային մատենադարան, ՄԻԴ, Մխիթարեան տպարան, Վիեննա 1979, 137-142:

73 ՎԱՐԴԱՆԵԱՆ, Ռ., Մ.թ. 1-4 թթ. ընթացքում Հայաստանում քողարկուած պղնձէ քաղաքային դրամների մասին, Ի «Հանդէս Ամսօրեայ», 2003, հ. 1-12, 144-162:

74 Անդ, 144-161:

75 Անդ, 158:

Ն.Ք. Բ.-Ա. դարերում միջազգային առևտրի միջոցով իրանից ու Միջագետքից հայկական շուկայ են ներթափանցում օտար դրամներ: Նրանց կազմում կը տեսնենք մակեդոնական, սելեուկեան, պարթևական, պոնտական, հայկական, կապադովկեան, փիլնիկեան, փոքրասիական քաղաքների դրամները⁷⁶: Վեց դարերի ընթացքում ինչքան էլ քիչ են եղել պարթևական դրամների հոսքը տարածաշրջան, այնուհանդերձ Հայաստանում յայտնաբերուել են Միհրդատ Ա.ի, Միհրդատ Բ.ի, Որոդ Ա.ի, Հրահատ Գ.ի, Որոդոս Բ.ի եւ Հրահատ Դ.ի դրաքմաները: Անհրաժեշտ է յիշատակել խիստ հազուադէպ, վաղ պարթևական դրամների՝ շարքին պատկանող ծագումով պարթև Վոնոն արքայի իշխանութեան տարիներին թողարկուած ատտիկեան դրամակշռային համակարգի արծաթեայ եւ պղնձեայ դրամային միաւորները⁷⁷: Վոնոնի դրաքմաները անմիջապէս ճանաչելի են եղել Հայաստանում: Վոնոնի դրամները այն հազուադէպ պարթևական դրամներից են, որոնց վրայ նշուած է արքայի անձնանունը: Այս շեղումը վկայութիւն էր այն զօրեղ ազդեցութեան, որ թողել էր դրամների ձեւաւորման հռոմէական ոճը պարթևական եւ առհասարակ արեւելեան դրամների վրայ: Մինչեւ այդ պարթև արքաների անձնանունները դրամների վրայ չէին արձանագրուում: Անձնանունների յիշատակումը յատուկ էր արեւմուտքի հելլենական պետութիւններին, այնուհետեւ Հռոմի կայսրութեանը, որտեղ կայսեր դիմանկարի շուրջը նշում էին նաեւ նրա տիտղոսները: Վոնոնի արծաթէ դրամների այս ձեւը արտացոլում էր հռոմէական պատկերագրութիւնը արեւելեան դրամների վրայ: Այս դրամները ոչ միայն թողարկուել են իրանում, այլ, հաւանաբար նաեւ Հայաստանում: Դրամների վրայ պահպանուած մենագրերի շարքում կայ Տիգրանակերտ քաղաքի անուան յոռնատառ միահիւսուածքը՝ ΤΓΡ: Տիգրանակերտ քաղաքը թերեւս եղել է տիրակալի դիմապատկերը կրող դրամների թողարկման վայրը⁷⁸: Դրամների հազուադէպութիւնը, արտայայտուում է նրանց շրջանառութեան մէջ ոչ ծաւալուն լինելը:

Հայաստանում շրջանառութեան մէջ եղած պարթևական դրաքմաների միջին կշիռը 3,4 գրամ էր: Հայաստանում յայտնա-

76 MOUSHEGHIAN, Kh. – MOUSHEGHIAN, A. – DEPEYROT G., *History and coin finds in Armenia, Antiquity, Moneta, Wettern*, 2000.

77 ՄՈՒՇԵՂԵԱՆ, Խ., *Դրամական շրջանառութիւնը Հայաստանում*, Երեւան 1983, 79:

78 Անդ:

բերած պարթևական դրամները հանդիպում են ինչպես գանձերի կազմում (Սառնակունք, Ապարան), այնպես էլ առանձին օրինակներով (Գառնի, Սիսիան, Փարաքար, Արտաշատ)⁷⁹: Վերջին տարիներին Հայաստանի Հանրապետութեան տարածքում կատարուող հնագիտական պեղումների արդիւնքով պարթևական դրամների գտածոները աւելացել են, որ կարող է նոր լոյս սփռել Հայաստանի դրամաշրջանառութեան պատմութեանը⁸⁰: Մինչ վերջերս ընդունուած էր, որ հայ Արշակունի թագաւորները դրամներ չեն թողարկել. դրամ հատելու իրաւունքը պատկանում էր Արշակունիների տոհմի կենտրոնական ճիւղին՝ Պարթեւաստանի արքաներին: Սակայն վերջերս երեւան եկան երկու պղնձ դրամներ, որոնք վերագրուեցին Տրդատ Ա. արքային⁸¹:

Հայաստանում դրամական շրջանառութիւնը ծաւալւում էր գերազանցապէս կայսերական դրամներով⁸²: Դրամները շարունակում էին թափանցել ռազմական արշաւանքների եւ միջազգային առեւտրական գործարքների միջոցով:

Ուշագրաւ են Հայաստան թափանցած հռոմէական դրամներն ու չքադրամները, որոնք իրենց պատկերազրութեան տուեալներով աղբիւրագիտական կարեւոր նշանակութիւն ունեն հայ-հռոմէական յարաբերութիւնների պատմութիւնն ուսումնասիրելու գործում: Այդ դրամները թողարկւում էին ռազմաքաղաքական կարեւոր իրադարձութիւնների կապակցութեամբ, որոնք վերաբերում էին Հայաստանին ու Հռոմին⁸³: Հայաստան էին թափանցում Ներոնի, Վեսպասիանոսի, Տիտոսի, Տրայանոսի, Ադրիանոսի, Անտոնինոս Պիոսի, Մարկոս Աւրելիոսի եւ Կոմմոդոսի օրօք հռոմում թողարկած արծաթէ դրամները: Հռոմէական դրամների բացարձակ տարածումը Հայաստանի դրամական տնտեսութեան մէջ դիտւում է ողջ Բ. դարի ընթացքում: Խիստ հազուադէպ՝ Հայաստան էին թափանցում նաեւ բոսփորեան թագաւորութեան դրամների առանձին օրինակներ⁸⁴:

79 ՄՈՒՇԵՂԵԱՆ Խ., ՀԺՊ, հ. 1, 816- 817:

80 ՎԱՐԴԱՆԵԱՆ Ռ., Սիսիանի դամբարանը, մ.թ.ա. I դարի 2-րդ կէս, ՀՀ ԳԱԱ Հնագիտութեան եւ ազգագրութեան ինստիտուտ, Երեւան 2009, 82-87:

81 KOVACS, F., *Armenian coinage in the classical period*, 2016, pl. 33 (195, 199).

82 BURNETT, A., Amandry M., Pere Pau Ripollés. *Roman Provincial Coinage*; BM Press and Bibliothèque Nationale, London Paris, 1992.

83 ՊՏՈՒԿԵԱՆ, Զ., Հայաստանի վերաբերեալ Հռոմէական դրամներ եւ մեղալիոններ, Ազգային մատենադարան, ՄԺԵ., Վիեննա 1971:

84 ՄՈՒՇԵՂԵԱՆ Խ., Դրամական շրջանառութիւնը Հայաստանում, նշ. աշխ., 86:

Հայաստանի դրամային տնտեսութեան համար բնորոշ էին համընդհանուր պատկերատիպի կայսերական դրամները⁸⁵։ Շրջանառութեան մէջ շքադրամները լայն տարածում չեն ունեցել ու պահպանուել են աւելի քիչ օրինակներով։ Այնուհանդերձ պատմականօրէն կարեւոր մի շարք հռոմէական դրամներ հատուեցին ն.թ. 36/34 թուականից մինչեւ Բ. դարի վերջը։ Այդ դրամների ամբողջ շարքը հատուել է Հայաստանի հանդէպ տարած յաղթանակների կամ երկու պետութիւնների միջեւ տեղի ունեցած քաղաքական յարաբերութիւնների տարբեր առիթներով, որ եւ իր դրսեւորումն է գտել դրամահատութեան մէջ։ Դեռեւս հանրապետութեան տիրապետութեան վերջերին առանձին զօրավարներ, իսկ կայսրութեան ժամանակահատուածում արդէն կայսրերը, հռոմէական զօրքերի՝ Հայաստան կատարած արշաւանքների եւ իրենց յաղթանակների փառքը յաւերժացնելու նպատակով թողարկում էին ոսկէ, արծաթէ ու պղնձէ դրամներ՝ յիշարժան մակագրութիւններով ու այլաբանական պատկերներով։ Ամբողջական տեսքով հայկական թագը առաջին անգամ պատկերուել է Բ.ա. 35 թուականին թողարկած՝ Մարկոս Անտոնիոսի հռոմէական դինարի վրայ։ Լատինական տառադարձութեամբ «Հայաստան» անունը առաջին անգամ գրուել է ն.թ. 32-31 թուականներին թողարկած այդ նոյն Մարկոս Անտոնիոսի եւ Կլէոպատրայի դիմանկարով արծաթէ դրամների վրայ։ Դրամագիտական այդ յուշարձանները հաղորդում են Հայաստանի գրաւման եւ Արտաշէսեան թագաւորութեան անկման մասին։ Այդպէս՝ վերոյիշեալ դրամները դասւում են Հայաստանի քաղաքական պատմութեան սկզբնաղբիւրների շարքին։ Դրամների շարքում կան այնպիսիք, որ թողարկուել են ոչ միայն Անտոնիոսի կողմից, այլեւ Կլէոպատրայի անունից⁸⁶։

Հռոմէական զօրքերի կողմից Հայաստանը նուաճելուն նուիրում աւելի շատ դրամներ են թողարկուել Օգոստոս կայսրի օրօք։ Դրանք ունեն այլաբանական արտայայտութիւններ։ Հայաստանը պատկերում էր պարտուած երիտասարդ թագաւորի կամ ցուլի, կամ էլ հայ ռազմիկի տեսքով⁸⁷։

85 Գառնիում գտնուած գանձը տե՛ս ՄՈՒՇԵՂԵԱՆ, Խ., *Դրամական շրջանառութիւնը Հայաստանում*, նշ. աշխ., 86։ Տե՛ս նաեւ BURNETT, A., *Trajan's campaigns in Armenia and Parthia (A. D. 113-117)*, in *Collection of articles Armenian numismatic first international conference dedicated to the memory of Kh. Mousheghian 2015*, Mekhitarist Congregation, Venice 2016, 103-135։

86 ՎԱՐԴԱՆԵԱՆ Ռ., *Արտաւազդ Բ.ի դրամները*, նշ. աշխ., 115։

87 ՄՈՒՇԵՂԵԱՆ, Խ., *Դրամական շրջանառութիւնը Հայաստանում I-II դդ. եւ Հռոմէական շխադրամներ*, ՀԺՊ, հ. I, 819։

Արտաշէսեան արքայատոհմի վերջին շրջանի դրամագիտական նիւթի խիստ սակաւ լինելը միշտ էլ առաջ է բերել դրամագէտներին մօտ դժուարութիւններ դրամների ճշգրիտ թուագրման կամ որոշման հարցում: Վերջին տարիներին նորայայտ դրամների երեւան գալով, վերանայում են Արտաշէսեան արքայատոհմի թողարկած դրամների շատ հարցեր՝ կապուած դրանց համակարգման, թուագրման, դրամահատարանների, ինչպէս նաեւ աճուրդներում եւ անձնական հաւաքածոներում ներկայացուած դրամների իսկութեան ու ճշգրտման վերաբերեալ⁸⁸: Վստահաբար նորայայտ դրամների երեւան գալը դեռ նոր լոյս պիտի սփռեն հայ դրամագիտութեան ասպարէզում խթանելով, պարզաբանելով ու ձեւաւորելով մէկ միասնական հայեցակէտեր հայկական դրամների ուսումնասիրութեան գործում:

Ամփոփելով հին դարերի դրամաշրջանառութեան պատկերը, Հայաստանում շրջանառութիւն ունեցած դրամները կարելի է բաժանել երեք խմբի: Առաջին խմբին են պատկանում Մերձաւոր արեւելքի երկրների հելլէնական միապետների թողարկած ատտիկեան համակարգի դրամները: Դրանք հայկական ու պարթեւական, ինչպէս նաեւ սելեւկեան վերջին դրամներն են: Երկրորդ խումբը հռոմէական դրամներն են, որ թողարկուել են հանրապետական ժամանակաշրջանի վերջում: Երրորդ խումբը հռոմէական կայսրութեան դրամներն են⁸⁹:

Գ. դարի 30-ական թուականներից Հայաստանը թեւակոխում է դրամական շրջանառութեան յաջորդ փուլը, որը բնորոշում է երկրում սասանեան դրամակշռային համակարգի հաստատմամբ եւ

88 ՎԱՐԴԱՆԵԱՆ, Ռ., *Լուկիոս Վերոսի օրօք Հայաստանում թողարկուած պղնձէ դրամներ*, ՊԲՀ, 2004, հ. 2, 234-253: Արտաշատում յայտնաբերուած, համեմատաբար լաւ պահպանուած պղնձէ մի դրամի օրինակի քննութեամբ հնարաւոր դարձաւ վերաթուագրել մի դրամ, որ նախկինում վերագրած էր Տիգրան Բ-ին: Արդիւնքում, աւելի լաւ պահպանուած գտածոյի ի յայտ գալով, նախկին տեսակէտը հերքուեց: Դրամը առնչուում է Լուկիոս Վերոսին, այն հատուել է յ.թ. 164/7 թուականներին ընկած ժամանակահատուածում, կամ դրանից յետոյ, երբ Սոհեմոսը գտնուում էր Հայաստանի թագաւորանիստ Արտաշատ քաղաքում, եւ Լուկիոս Վերոսը Մեծ Հայքի գահը յանձնեց Սոհեմոսին: Դրամի դիմերեսին, ետին դաշտում պատկերուած է երկու դեմք, իսկ դարձերեսին պատկերուածները Մասիսն ու Սիսն են, եւ ոչ թե Կապադովկիայի Արագոս լեռը: Արարատ լեռան պատկերը խորհրդանշում է հայոց աշխարհը:

89 ՄՈՒՇԵՂԵԱՆ, Խ., *Հայոց պատմութեան դրամագիտականը*, մշ. աշխ., 25:

միանգամայն նոր պատկերազրույթեան արծաթէ դրամներով: Պարսից Սասանեան թագաւորութեան դրամներն էին դրանք, որոնց վիճակուած էր շուրջ հինգ հարիւր տարի իշխել միջազգային ապրանքափոխանակութեան գործարքներում⁹⁰:

ԱՆԱՀԻՏ ՄՈՒՇԵՂԵԱՆ

90 ԱճԴ, 25:

Summary

THE CIRCULATION OF MONEY IN ARMENIA IN THE
ACHAEMENID, GRECO-MACEDONIAN AND ROMAN ERAS

(A return to Armenian coinage)

ANAHIT MOUSHEGHIAN

When it comes to coin hoards, Armenia is considered to be among the richer countries. It is possible to say without exaggeration that there are hardly any regions all throughout Armenia where old coins or hoards have not been found. Given its geographical position, the Armenian Highlands served as a link between West and East. Armenia has been connected with the outside world through myriads of ties due to commercial activities. Economic and political movements have brought to Armenia coins of various national origins, which convey important testimonies not only about the history of the Armenian people, but also that of neighbouring peoples. Alongside foreign coins, Armenian coins have generated their own history, thereby developing the circulation of coins in Armenia.

Apart from Armenian mintings, the coins that have circulated in Armenia could be divided into three groups. First, the coins of Attic weight minted by Hellenistic monarchs of the Near East, including Armenian, Parthian, as well as the later Seleucid coins. Second, Roman coins minted during the end of the republican era. Third, the coins of the Roman Empire.

From around 230 AD onwards, Armenia entered into the next stage of its coin circulation, characterised by the establishment of the system of Sasanian coinage in the country with silver coins of completely new design. Those coins of the Sasanian dynasty of Persia were destined to dominate global trade activities for some five hundred years.